

վիճարանութիւններն ու ողջ անցուղարձը Քէ Դ՛Օոսէին... ձիշդ այնպէս, ինչպէս 1878-ին Ղալաթիոյ Աղղային ժողովի վիճարանութիւնները կը հաղորդուէին հայ մարդոց ձեռքով Բ. Դրանս...

Ինչքան ալ, սակայն, ժորժ Կլէմանսօ ըստէպ տարօրինակ եւ քմահաճ լինէր իր որոշումներուն մէջ, դժուար է երեւակայել, որ նա Կիլիկիոյ պատճառով ոխ պահէր հայութեան դէմ եւ վտանգէր իր պաշտպանած հայ նահատակ ժողովուրդի դատը: Ֆրանսայի վարչապետն եւս, Լոյս ձօրձի պէս, կը սպասէ եղբր, որ Ամերիկան ճշդէ իր դիրքը վերջնականապէս հայկական մանդատի նկատմամբ, — Ամերիկան՝ որ իր հայանպաստ տրամադրութեամբ հանդերձ այնքան աղէտաւոր, ճակատագրական դեր խաղաց մեր հարցին մէջ...

Մոռնալու չէ, որ Կլէմանսօ հրաժարուելով իր վարչապետի պաշտօնէն, 1920-ի Յունուար 20-ին իր հրաժարականը տուաւ նաեւ Սաղաղութեան Վեհաժողովին: Մինչ այն, անշուշտ, Միացեալ, Անկախ Հայաստանի ծրագիրը որոշուած բան մըն էր: Անկէ յետոյ էր — Միլլրանի, Բրիանի օրով — որ Սէվրի դաշնագիրը ստորագրելով միաժամանակ Ֆրնասական դիւնասագիտութիւնը — թերեւս Անգլիոյ արեւելեան յառաջխաղացութեան վախէն մղուած — սկսեց նորէն սիրաբանիլ Թուրքիոյ հետ եւ դիմեց բանակցութիւններու, որոնք յանդեցան Ֆրանքլին Բուլժոնի «բարեկամական» դաշինքին: Թուրք եւ բուլղերիկ, օգտուելով Եւրոպայի ու Ամերի-

կայի քաղաքներէն, ստնակոխ ըրին Հայաստանը եւ պատուեցին Սէվրի դաշնագիրը:

Ո՞ր կողմն է ամենէն պատասխանատուն, որո՞ւ մեղսակցութեան բաժինն է մեծ — Ֆրանսայի՞նը, Ռուսիայի՞նը, Անգլիայի՞նը, Ամերիկայի՞նը...

Իրողութիւնն այն է, որ հարիւրերորդ անգամը մեր արտասուելի պատմութեան մէջ բոլոր սեւ ոյժերն ու չարաչուք «ղիպուածները» — բուլղերիկեան յեղափոխութիւն, Ֆրանքլին Բուլժոնեւրու սագրանքներ, խեղդամահ Թուրքիոյ յանկարծակի վերելք ու դիմադարձութիւն, ամերիկեան Ծերակոյտի անսպասելի բժրոստացում նախագահին դէմ, Ուիլսոնի հիւանդութիւն եւ մահ, յունական կատաստրօֆ, 300,000-նոց բանակի գլխապատառ նահանջ քեմալական թափթփուկներուն առջեւ եւայլն, եւայլն, եւայլն — բոլորը միացան, համադրուեցան եւ ծառայան վիթխարի պատնէչի մը պէս, փոքրիկ, անտէր, անպաշտպան հայ ժողովուրդին դէմ եւ խորտակեցին դարերու անարդ դերութենէն վերջ իրականացած անոր վսեմագոյն երազը...

Բայց, յանուն Ֆրանսական «Վազրի» պատուին, յանուն մարդկութեան եւ ի սէր այն մեծ զաղափարներու, զոր Սաղաղութեան Վեհաժողովի նախագահը ատեն մը խանդով ու համոզումով կը պաշտպանէր «Օրոր»ի եւ «Պրօ Արմենիա»ի մէջ, կ'ուզենք հաւատալ իր թարմ դամբարանին առջեւ, որ Կլէմանսօ անպատասխանատու եւ անմասն է հայկական ողբերգութեան մէջ: